Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն   Ե Վ   Թ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն   Կ Ե Ն Տ Ր Ո Ն

# ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍՏԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

# ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

*Հարգելի՛ ուսուցիչ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

***Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:***

**1** **Ի՞նչ է թերապևտիկ լայնությունը:**

1) դոզաների միջակայքն է՝ առավելագույն թերապևտիկից մինչև առավելագույն թունավորը
2) դոզաների միջակայքն է՝ միջին թերապևտիկից մինչև մահացու /լետալ/ դոզան
3) դոզաների միջակայքն է՝ նվազագույն թերապևտիկից մինչև նվազագույն տոքսիկը
4) դոզաների միջակայքն է՝ միջին թերապևտիկից մինչև նվազագույն թունավորը

**2** **Ի՞նչ է բորբոքումը:**

1) օրգանիզմի բարդ ռեֆլեկտոր ռեակցիան է վնասվածքի նկատմամբ, որն արտահայտվում է տեղային և ընդհանուր փոփոխությունների համալիրով
2) օրգանիզմի բարդ հումորալ ռեակցիան է վնասվածքի նկատմամբ, որն արտահայտվում է անոթների տեղային խանգարումների համալիրով
3) տեղային նյութափոխանակության խանգարում է, որն առաջանում է հյուսվածքների վնասման հետևանքով
4) բարդ քիմիական պրոցես է, որը զարգանում է վնասված հյուսվածքներում

**3** **Բազմաշերտ տափակ էպիթելով մաշկի ո՞ր շերտն է ձևավորվում:**

1) էպիդերմիս
2) պտկիկային
3) ցանցային
4) դերմա

**4** **Որքա՞ն է տևում մաքիի հղիությունը:**

1) 5 ամիս
2) 2 ամիս
3) 4 ամիս
4) 3 ամիս

**5** **Նշվածներից ո՞րը հելմինթոովոսկոպիկ մեթոդ** ***չէ*****:**

1) Ֆյուլեբոռնի
2) Վայդի
3) Բերմանի
4) Տրիխինելոսկոպիայի

**6** **Ինչպե՞ս է կոչվում հաստ աղիքներում կերազանգվածի կանգը:**

1) կոպրոստազ
2) հեմոստազ
3) լիմֆոստազ
4) խիմոստազ

**7** **Նշված հորմոններից ո՞րն է արտադրվում մակերիկամի ուղեղային շերտում:**

1) տեստոստերոն
2) ադրենալին
3) ալդոստերոն
4) կորտիզոն

**8** **Ի՞նչ է տեղի ունենում սիմպաթիկ նյարդային համակարգի գրգռման դեպքում:**

1) ադրենալինի արտադրության նվազում
2) աչքի բբի նեղացում
3) սրտի աշխատանքի դանդաղում
4) ստամոքսի հյութազատության նվազում

**9** **Նշել որոճողների կրծքային վերջավորությունների հոդերի տեղադրման ճիշտ հաջորդականությունը:**

1.արմունկ, 2.կապ, 3.պսակ, 4.դաստակ

1) 4, 2, 3, 1
2) 1, 2, 3, 4
3) 2, 1, 4, 3
4) 1, 4, 2, 3

**10** **Ի՞նչ է արյունուռուցքը /հեմատոման/:**

1) հյուսվածքների ներծծումն է շճային էքսուդատով, առանց մաշկի ամբողջականության խախտման
2) հյուսվածքների մեխանիկական վնասվածք է, որի դեպքում տեղի է ունենում արյունազեղում և արյունով լցված խոռոչի գոյացում
3) մաշկի և ենթամաշկային բջջանքի փակ վնասվածքն է, որի դեպքում պատռվում են արյունատար և ավշային անոթները և գոյանում են արյունուռուցքներ
4) ավշային անոթի պատռվածքից գոյացած ավշի կուտակումն է, որի դեպքում պահպանված է մաշկի ամբողջականությունը

**11** **Ինչպիսի՞ բիլիռուբին է հայտնաբերվում մեխանիկական դեղնախտի դեպքում:**

1) ուղղակի և անուղղակի
2) անուղղակի
3) ուղղակի
4) բիլիվերդին

**12** **Ի՞նչ է պնևմոթորաքսը:**

1) թոքամիզում արյան կուտակում
2) թոքամիզի բորբոքում
3) թոքամիզի ջրգողություն
4) թոքամիզում օդի կուտակում

**13** **Ինչպե՞ս է կոչվում արգանդի շճային թաղանթի բորբոքումը:**

1) պարամետրիտ
2) էնդոմետրիտ
3) միոմետրիտ
4) պերիմետրիտ

**14** **Տվյալ ցեղի մայրերի կենդանի զանգվածի քանի՞ տոկոսի ձեռք բերման դեպքում է կենդանին համարվում մարմնապես հասուն:**

1) 20%
2) 50%
3) 70%
4) 30%

**15** **Ինչպե՞ս է կոչվում ստամոքսի լորձաթաղանթի բորբոքումն:**

1) գաստրիտ
2) կոլիտ
3) էնտերիտ
4) մետրիտ

**16** **Նշվածներից ո՞րը *չի* համարվում սրտի հիվանդությունների ախտորոշման եղանակ:**

1) գրաֆիկական
2) ռադիոլոգիական
3) ուլտրաձայնային
4) էնդոսկոպիկ

**17** **Ինչպե՞ս է կոչվում հաճախակի միզարտազատումը:**

1) պոլակիուրիա
2) օլիգուրիա
3) անուրիա
4) պոլիուրիա

**18** **Ինչպիսի՞ աղմուկներն են հայտնաբերվում ներսրտենու բորբոքման ժամանակ:**

1) կարդիոպուլմոնալ
2) պերիկարդիալ
3) էնդոկարդիալ
4) պլևրալ

**19** **Ի՞նչ է իրենից ներկայացնում խոլանգիտը:**

1) լեղածորանների ուռուցք
2) լեղապարկի բորբոքում
3) լեղածորանների բորբոքում
4) լեղաքարերի առաջացում

**20** **Ի՞նչ է ցույց տալիս էրիթրոցիտների օսմոտիկ կայունությունը:**

1) էրիթրոցիտների ակտիվությունը
2) էրիթրոցիտների կյանքի տևողությունը
3) ոսկրածուծի ֆունկցիոնալ կարողությունը
4) լեյկոցիտների ակտիվությունը

**21** **Նշվածներից որո՞նք են մեղուների մակաբուծային հիվանդությունները: (3 միավոր)**

1. ամեբիոզ
2. ասպերգիլոզ
3. ասկոսֆերոզ
4. վիրուսային կաթված
5. նոզեմատոզ
6. ակարապիդոզ
7. վարոատոզ
8. հաֆնիոզ
9. պիեմիա

**22** **Նշված եղանակներից որո՞վ կարելի է ախտորոշել վարակիչ հիվանդությունները: (3 միավոր)**

1. ռենտգենաբանական
2. ֆունկցիոնալ
3. ուլտրաձայնային
4. շինուկաբանական
5. վիրուսաբանական
6. գծագրական
7. շոշափման
8. մանրէաբանական
9. գործիքային

**23** **Նշվածներից որո՞նք են կենդանիներից մարդուն փոխանցվող հիվանդությունները: (3 միավոր)**

1. լիստերիոզ
2. կատաղություն
3. սիբիրախտ
4. աֆրիկյան ժանտախտ
5. խշխշան պալար
6. բրադզոտ
7. ոչխարների ծաղիկ
8. ոչխարների ինֆեկցիոն կատառային տենդ
9. լեպտոսպիրոզ

**24** **Նշվածներից որո՞նք են դեղանյութերի ներմուծման էնտերալ ուղին: (3 միավոր)**

1. ներմկանային
2. բերանային
3. ենթալեզվային
4. ենթամաշկային
5. ուղիղ աղիքային
6. վերմաշկային
7. ներերակային
8. ներզարկերակային
9. ներսրտային

**25** **Նշվածներից ո՞ր 3 հիվանդություններն են հողային ինֆեկցիա: (3 միավոր)**

1. ժանտախտ
2. գազային գանգրենա
3. կարկամախտ
4. դաբաղ
5. խոզերի կարմրախտ
6. գեղձատապ
7. բոտուլիզմ
8. սպունգանման հիվանդություն
9. բրուցելոզ

**26** **Ընտրել խշխշան պալարին բնորոշ մսեղիքի հետ վարվելու 3 ճիշտ պնդումները: (3 միավոր)**

1. Մսեղիքը ապխտում են:
2. Հիվանդ կենդանուն սպանդի *չեն* ենթարկում:
3. Հիվանդ կենդանուց ստացված մսեղիքը օգտահանում են այրելու միջոցով:
4. Մսեղիքը օգտագործում են 2 ժամ ջերմային մշակումից հետո:
5. Մսեղիքը օգտագործում են 30 օր խորը սառեցումից հետո:
6. Մսեղիքը ուղարկում են վերամշակող ձեռնարկություն:
7. Կատարում են նմուշառում և ուղարկում լաբորատորիա:
8. Մսեղիքը օգտագործում են առանց սահմանափակումների:
9. Մսեղիքը օգտագործում են ախտահարված հատվածները հեռացնելուց հետո:

**27** **Որո՞նք են միզային համակարգի հիվանդությունների համախտանիշները: (3 միավոր)**

1. էոզինոֆիլիա
2. ուրեմիկ
3. կոլիկներ
4. հեպատոլիենալ
5. դեղնախտ
6. այտուցային
7. նեյտրոֆիլիա
8. հեպատոտոքսիկ
9. միզային

**28** **Նշվածներից որո՞նք են լեյկոցիտների տեսակները: (3 միավոր)**

1. մակրոֆագ
2. լիմֆոցիտ
3. մոնոցիտ
4. պոյկիլոցիտ
5. էոզինոֆիլ
6. անիզոցիտ
7. հեպատոցիտ
8. ֆիբրոբլաստ
9. ռետիկուլոցիտ

**29** **Նշել կենտրոնական նյարդային համակարգը գրգռող դեղամիջոցները. (3 միավոր)**

1. անեսթեզին
2. ստրիխնին
3. պարացետամոլ
4. կոֆեին
5. ցեֆտրիաքսոն
6. լիդոկային
7. կորդիամին
8. նովոկային
9. անալգին

**30** **Նշել կրուպոզ պնևմոնիային բնորոշ 3 ախտանշանները: (3 միավոր)**

1. բթության հորիզոնական գիծ
2. կայուն տենդ
3. ընդմիջվող տենդ
4. պլևրալ աղմուկների առկայություն
5. էնդոկարդիալ աղմուկ
6. խառը հևոց
7. արտաշնչական հևոց
8. թոքերում բթացման մեծ օջախների առկայություն
9. թոքերում բթացման սահմանափակ օջախների առկայություն